ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ
Հեռախոս 0234-62901

ՈՐՈՇՈՒՄ

« 26» դեկտեմբերի 2012թվականի N_14-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է

Նոր Կյանք համայնքի 2013թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների/ներառյալ ոչ հիմնական/ շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Օ Բ Յ Ե Կ Տ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

ա/ մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -10000դր.

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 30000 դր.

բբ/ 501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000 դր.

բգ/ 1001 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 70000 դր.

Ո Չ Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Շ Ի Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Դ Ր Մ Ա Ն Հ Ա Մ Ա Ր

գ/ մինչև 20 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 3000 դր.

դ/ 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 5000 դր.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացակայությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն -3000դր.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման

աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է - 5000 դր.

1, 2 և 3 կետերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար -2500դր

բ/ սախտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար - 2500 դր.

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար - 350 դր.

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150,0 հազ. դր.

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00 - ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա/ առևտրի օբյեկտների համար - 25,0 հազ. դր.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50,0 հազ. դր.
գ/ բաղնիքների /սաունաների/ համար - 200,0 հազ. դր.
դ/ խաղատների կազմակերպման համար - 500,0 հազ. դր.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250,0 հազ. դր.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100,0 հազ. դր.

7. Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար.

ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1000,0 դր.
բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2500,0 դր.
գ/ այլ արտաքին գովազդի համար - 500,0 դր.
դ/ դատարկ գովազդային վահանակների համար - 700,0 դր.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել - 2000,0 դր.

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու համար տեղական տուրքը սահմանել - 5000,0 դր.

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված

տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու տեղական ինքնակառավարման մարմնի ծառայության համար փոխհատուցման վճար սահմանել - 1000,0 դրամ

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար փոխհատուցման վճար սահմանել - 1000,0 դրամ

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար սահմանել - 1000,0դրամ

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:

Ավագանու անդամներ

կողմ 7/յոթ/		դեմ0/զերո/	ձեռնպահ 0/զերո/
Է. Աբրահամյան			
Ա. Ամիրյան			
Բ. Բաղդասարյան			
Ա. Աբրահամյան			
Հ. Հովհաննիսյան			
Հ. Հովհաննիսյան			
Տ. Տեր Նիկողոսյան			

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Մ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ